ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 55(1), 2021 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 551.58

ԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ *, Ն. Ա. ՍԱՀԱԿՅԱՆ **

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Լեռնային գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացումը մեր հանրապետության կարևոր խնդիրներից է լեռնային շրջաններն անասնապահական շրջաններ են: Դրանք բնորոշվում են բնական և մարդածին արժեքներով, բարենպաստ բնակլիմայական պայմաններով ու արհեստներով, ռեսուրսներով, որոնց ճիշտ օգտագործումը կարող է խթան հանդիսանալ ոչ միայն լեռնային բնակավայրերի կայունացմանը, այլ նաև զարգացմանը: Լեռնային տարածքները զբոսաշրջության տարբեր ձևերի կազմակերպման բարենպաստ շրջաններ են: Հոդվածում փաստական նյութի ընդհանրացման հիման վրա տրված են ՀՀ լեռնային գյուղական բնակավայրերի հիմնական գծերի՝ տարաբնակեցման, մասնագիտացման, ենթակառուցվածքների արդի հիմնախնդիրները:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.1.057

***Keywords*:** rural resettlement, internal migration, specialization of agriculture, employment, small villages, uninhabited villages, rural development.

Խնդրի դրվածքը: Գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման հարցը գրեթե բոլոր ժամանակներում, այդ թվում՝ մեր օրերում դարձել է ամենաարդիական հիմնախնդիրներից մեկը: Այն ավելի հատկանշական է լեռնային շրջաններում, և այդ հարցով այսօր զբաղվում են շատ մասնագետներ: Կան բազմաթիվ կարծիքներ, առաջարկություններ գյուղական բնակավայրերի, բնակչության արտահոսքի, կայունացման և զարգացման վերաբերյալ: Այս նպատակով արդեն մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել աշխարհի լեռնային շատ երկրներում: Մեր նպատակն է վեր հանել գյուղական բնակավայրերի բնակչության շարժի, զբաղվածության հիմնահարցերը և տալ առաջարկներ բնակավայրերի կայունացման ու հետագա զարգացման ուղղությամբ: Հարցը նրանում է, որ տարբեր ժամանակաշրջաններում՝ խորհրդային, հետխորհրդային տարիներին գյուղական բնակավայրերն ունեցել են բազմաթիվ հիմնախնդիրներ (ներհանրապետական միգրացիա, արտաքին միգրացիա, գյուղատնտեսական մասնագիտացում, արհեստներ և այլն), որոնց արդյունքում զգալի թվով գյուղական բնակավայրեր նվազել են, կամ վերացել:

* E-mail: v.grigoryan@ysu.am
** E-mail: narek.sahakyan@ysu.am

Այս բոլորին, եթե ավելացնենք այն, որ բնակչության համեմատաբար բարձր բնական աճ նկատվում է լեռնային շրջաններում, բայց միգրացիան այս շրջաններում ունեցել է ամենամեծ ցուցանիշը, ապա գյուղական բնակավայրերի համեմատաբար շոշափելի հիմնախնդիրներն առկա են լեռնային շրջաններում: Հնարավո՞ր է արդյոք լեռնային շրջաններում բնակչության համար ստեղծել աշխատելու, ապրելու անհրաժեշտ պայմաններ: Այս խնդիրը լուծելու համար պետք է խորն ուսումնասիրել հատկապես մեր լեռնային շրջանները:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Գրական աղբյուրների և փաստական հարուստ նյութը վերլուծելիս աշխատանքում օգտագործվել են վիճակագրական, վերլուծության, ամփոփման, ընդհանրացման, համեմատական և անալոգիայի (նմանակության) աշխարհագրական մեթոդները:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ինչպես գիտենք լեռնային տարածքները զբաղեցնում են մեր հանրապետության տարածքի շուրջ երեք քառորդը: Լեռնային շրջանները, ի տարբերություն հարթավայրային, ունեն իրենց առանձնահատկությունները.

- բնորոշ են որպես արոտավայրեր;
- հարուստ են բնական և օգտակար հանածոներով;
- մեր հանրապետության բարձրադիր շրջանները հարուստ են սառնորակ, հանքային ու բուժիչ աղբյուրներով;
- լեռնային շրջանների հովտային և լեռնանցքների տարածքներում մշտապես փչում են տարբեր ուժգնության և ինտենսիվության քամիներ, որոնք էժան էներգիայի աղբյուր են;
- այքի են ընկնում արեգակնային ճառագայթման ինտենսիվությամբ:

Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տվել, որ լեռնային շրջանների գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորված է բնակլիմայական պայմաններով, տարածաշրջանի պատմությամբ, բնակչության մասնագիտացմամբ, բնակեցման աստիճանով, սպասարկման ենթակառուցվածքների զարգացման մակարդակով, պետության հովանավորությամբ: Հատկանշական է Շվեյցարիայի օրինակը: Շվեցարական կառավարությունը լեռնային տարածքներում բնակչությունը ամրապնդելու նպատակով տրամադրում է վարկեր առանձնատներ կառուցելու համար, նշանակում է կենսաթոշակներ բազմազավակ ընտանիքներին, կառուցում է արտադրական փոքր ձեռնարկություններ, բացում է տարբեր բնույթի սպասարկման օբյեկտներ:

Մեր հանրապետությունում լեռնային շրջանների բնակիչները, որոնք տարբեր ժամանակներում թողել են իրենց բնօրրանը և իջել հարթավայր, սովորել են իրենց պայմաններին, տիրապետել են որոշակի հմտությունների, արհեստների: Սակայն իջնելով հարթավայր նրանք ստիպված ընտելացել են նոր բնակլիմայական պայմաններին, աշխատանքային հմտություններին:

Հայաստանի Հանրապետության լեռնային շրջաններն ունեն բարենպաստ պայմաններ կայունանալու և զարգանալու համար: Հաշվարկները ցույց են տվել, որ խորհրդային տարիներին դատարկվել, վերաբնակեցվել է լեռնային և բարձր լեռնային ավելի քան 380 բնակավայր (կառավարության որոշմամբ լեռնային են համարվում ծովի մակարդակից 1700-ից մինչև 2000 *մ*, իսկ 2000 *մ*-ից ավելի բարձրություն ունեցողները՝ բարձր լեռնային բնակավայրեր): Տեղական և ռազմավարական գործոններով պայմանավորված այս ցուցանիշներից հաճախ շեղվել են: Հետխորհրդային տարիներին լեռնային բնակավայրերի

հիմնախնդիրները նույնպես մնացել են ու ստացել ավելի սուր բնույթ: ՀՀ գրեթե բոլոր մարզերում առկա են լեռնային և բարձր լեռնային բնակավայրեր: Դրանք համեմատաբար քիչ են Տավուշի և Արարատի մարզերում, իսկ Արմավիրի մարզում բացակայում են: Հանրապետության Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում այս խնդիրն առավել ակնառու է (աղ. 1):

Աղյուսակ 1

ՀՀ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի թիվն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության [1]

Մարզ	Գյուղական բնակավայրերի թիվը	Լեռնային բնակավայրերի թիվը	Բարձր լեռնային բնակավայրերի թիվը	Բնակավայրերի թիվն ըստ բարձրությունների						
				1700–1799	1800–1899	1900–1999	2000–2099	2100–2199	2200–2299	2300 և ավելի
Արագածոտն	118	25	40	9	12	6	15	25	–	–
Արարատ	94	6	–	2	3	1	–	–	–	–
Արմավիր	95	–	–	–	–	–	–	–	–	–
Գեղարքունիք	94	30	61	6	6	29	31	14	3	2
Լոռի	121	32	–	24	6	2	–	–	–	–
Կոտայք	61	21	4	12	8	1	4	–	–	–
Շիրակ	128	45	39	18	16	20	23	6	–	1
Սյունիք	133	35	12	21	6	11	7	2	–	–
Վայոց ձոր	52	14	11	6	8	4	4	2	1	–
Տավուշ	61	2	–	2	–	–	–	–	–	–
Ընդհանուր	957	210	167	99	65	74	94	37	4	3

Աղյ. 1-ից երևում է, որ ՀՀ գյուղական 957 բնակավայրերից 377-ը (39,4%) լեռնային և բարձր լեռնային կարգավիճակ ունեն: Ամենաբարձր տեսակարար կշիռ ունեն Գեղարքունիքի (98%), Արագածոտնի (54%), Շիրակի (53%) մարզերում, ամենացածրը՝ Տավուշի (3%) և Արարատի (ավելի քան 6%) մարզերում, իսկ Արմավիրի մարզում բացակայում են լեռնային բնակավայրերը: Լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը համապատասխանաբար կազմում են՝ 55,7% և 44,3% [2]: Փաստորեն, տեսակարար կշռով առանձնապես մեծ տարբերություն չկա լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի միջև, բնականաբար առկա հիմնախնդիրներն էական տարբերություն չունեն երկուսում էլ: Բարձր լեռնային բնակավայրերն առանձնապես մեծ են Գեղարքունիքի (40), Արագածոտնի (38), Շիրակի (30) մարզերում, բացակայում են Արմավիրի, Տավուշի և Արարատի մարզերում, իսկ Կոտայքի (4) և Սյունիքի (9) մարզերում նրանց տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ փոքր է՝ երկու մարզերում էլ 7%:

ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերը գերազանցապես փոքր են (մինչև 500 բնակիչ), զգալի մասը նույնիսկ ունեն 100 բնակչից պակաս, իսկ հանրապետության զրոյական բնակչություն ունեցող 41 բնակավայրերի ճնշող մեծամասնությունը գտնվում են այս գոտում:

Աղյ. 2-ի տվյալներից երևում է, որ ՀՀ գյուղական բնակավայրերի ավելի քան 21%-ը (213 բնակավայր) փոքր են՝ ունեն մինչև 500 բնակիչ: Լեռնային փոքր բնակավայրերի մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն 100–

300 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերը, որոնք կազմում են լեռնային և բարձր լեռնային փոքր գյուղական բնակավայրերի ավելի քան 44%-ը (94 բնակավայր): Ավելի անհանգստացնող են մինչև 100 բնակիչ ունեցող լեռնային բնակավայրերը, որոնց թիվը կազմում է 29% (62), ընդ որում, 30 բնակավայր ունեն զրոյական բնակչություն: Այս բնակավայրերի սոցիալ-տնտեսական պայմանները վատ են և եթե առաջիկայում այս բնակավայրերում բնակչության արտահոսքը չկանխվի, ապա մի քանի տարի հետո մնացած 32-ն էլ կդառնան անմարդաբնակ:

Աղյուսակ 2

ՀՀ լեռնային և բարձր լեռնային փոքր գյուղական բնակավայրերի թիվն ըստ մարզերի [3]

Մարզեր	Բնակչության թիվը (մարդ)							
	լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի թիվը	0-ական բնակչություն ունեցող	մինչև 50	51–100	101–200	201–300	301–400	401 –500
Արագածոտն	34	3	1	2	7	6	5	10
Արարատ	4	–	–	–	–	4	–	–
Արմավիր	–	–	–	–	–	–	–	–
Գեղարքունիք	32	4	1	1	9	7	5	5
Լոռի	18	2	3	–	6	3	2	2
Կոտայք	9	1	–	–	2	1	3	2
Շիրակ	51	6	5	3	11	14	6	6
Սյունիք	41	6	10	3	7	6	4	5
Վայոց ձոր	20	4	2	1	4	7	1	1
Տավուշ	2	2	–	–	–	–	–	–
Ընդհանուր	213	30	22	10	46	48	26	31

Աղյուսակ 3

ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության շարժը 1959–2019 թթ. [3–6]

Մարզ	Տարեթիվ (մարդ)				
	1959	1988	1999	2012	2019
Արագածոտն	6513	5296	5426	5780	6173
Արարատ	937	905	780	926	880
Արմավիր	–	–	–	–	–
Գեղարքունիք	14151	20565	6982	7704	7270
Լոռի	5769	6448	2679	2748	2615
Կոտայք	3361	3351	2776	2812	2458
Շիրակ	16525	18659	9758	10070	9815
Սյունիք	15410	10281	7605	7050	6243
Վայոց ձոր	7952	7281	3968	3724	3438
Տավուշ	146	265	24	–	–
Ընդհանուր	70764	73051	39998	40814	38892

Արարատի մարզի լեռնային բնակավայրերը 4-ն են, որոնք ունեն սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման խնդիր, իսկ Տավուշում զրոյական բնակչություն ունեն Ճերմակավանը և Գեղատափը:

Չափազանց անհանգստացնող է Սյունիքը, մանավանդ վերջին դեպքերի առնչությամբ: Մարզի 131 գյուղական բնակավայրերից 47-ը լեռնային և բարձր լեռնային են, որից 41-ն ունեն մինչև 500 բնակիչ: Սյունիքի լեռնային 6 գյուղեր անմարդաբնակ են, 13-ն ունեն մինչև 100 բնակիչ: Շիրակի և Վայոց ձորի մարզերում նույնպես լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի կայունացման խնդիրը չափազանց լուրջ է՝ Շիրակում 14 (փոքր գյուղերի 28%), Վայոց ձորում 7 (փոքր գյուղերի 35%), գյուղական բնակավայրերն ունեն մինչև 100 բնակիչ (աղյ. 2):

Աղյ. 3-ի տվյալները ցույց են տալիս, որ լեռնային գյուղական բնակավայրերի դատարկման առաջին պատճառը եղել է 1988–1994 թթ.-ի հայ-ադրբեջանական կոնֆլիկտը ինչի հետևանքով բնակչության թիվը պակասել է 47%-ով: Դա ավելի ակնառու Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում: Վերջին տասնամյակի ընթացքում որոշակի ծրագրերի իրականացման արդյունքում նկատվում է լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության կայունացում՝ 38–41 հազարի սահմաններում:

Աղյուսակ 4

Առողջապահական և կրթական հաստատություններ չունեցող ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերը (2019 թ.) [7]

Մարզ	բուժհաստատություն	Կրթական հաստատություն
Արագածոտն	8	8
Արարատ	–	–
Արմավիր	–	–
Գեղարքունիք	6	5
Լոռի	5	5
Կոտայք	1	1
Շիրակ	13	8
Սյունիք	14	13
Վայոց ձոր	7	9
Տավուշ	2	2
Ընդհանուր	58	61

Լեռնային շրջանների գյուղական բնակավայրերի դատարկման, վերաբնակեցման, բնակչության թվի նվազման խնդիրները բազմազան են: Դրանցից են.

- *Ճանապարհային ենթակառուցվածքների բացակայությունը կամ վատթար վիճակը*: Այսպես, Տավուշի մարզի Գեղատափ և Ճերմակավան բնակավայրերը, որոնք գտնվում են ծովի մակարդակից 1700 *մ* բարձրության վրա, Դիլիջան ազգային պարկում, զրկված են ասֆալտապատ ճանապարհից, որը գյուղերի աստիճանաբար դատարկման պատճառներից մեկն է:
- *Առողջապահական և կրթական հաստատությունների բացակայությունը*: Այժմ ՀՀ թվով 58 գյուղական բնակավայրեր զրկված են տարրական բուժսպասարկումից (բացակայում է բուժկետը), իսկ 61 գյուղական բնակավայրեր՝ նույնիսկ տարրական դպրոցից: Հատկանշական է Արագածոտնի մարզի Ջրամբար և Արարատի մարզի Տիգրանաշեն բնակավայրերը, որոնց բնակչության թիվը 160–180 բնակչի սահմաններում է, բացակայում են դպրոցները (ՀՀ ամենամարդաշատ գյուղական բնակավայրերն են, որոնցում բացակայում են կրթօջախներ):

- *Բնակչության զբաղվածության և սպասարկման պայմանների բացակայությունը*: ՀՀ զգալի թվով գյուղական բնակավայրեր (անտառտնտեսությանը, գազանաբուծական տնտեսությանը, երկաթուղային կայարաններին կից) չունենալով հողատարածքներ, սպասարկման ենթակառուցվածքներ (առևտրի օբյեկտ, բուժ կետ և այլն) գտնվում են անհետացման եզրին, կամ ունեն զրոյական բնակչություն (աղյ. 4):
- *Աշխատատեղերի բացակայությունը*: Լեռնային շրջանների գյուղական բնակավայրերի երիտասարդ տարիքի բնակչությունը գերազանցապես մատնված է անգործության, հատկապես որոշակի կրթական ցենզ ունեցողները:

Ինչ վերաբերվում է լեռնային շրջանների կամ տարածքների բնակեցման խնդրին, նպատակահարմար է ընդհանուր գծերով վեր հանել այն գործառույթներն ու առաջարկվող միջոցառումները, որոնց օգնությամբ կարելի է զարգացնել գյուղական բնակավայրերի տնտեսությունը ու բնակիչների համար ապահովել աշխատանքի, կուլտուր-կենցաղային բավարար պայմաններ:

Խորհրդային և հետխորհրդային տարիներին որոշակի առումներով նկատելի են դարձել գյուղական բնակավայրերի զարգացման ուղղությամբ տարվող ծրագրերը: Իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ: Արտադրական կարողությունների ստեղծման շնորհիվ կայունացվել են Բանդիվանը, Ջրաբերը, բնական հուշարձանների հետ պայմանավորված՝ Մոզրովը, անտառային շրջանում՝ Հանքավանը, Փյունիկը, Արտավազը, պատմամշակութային արժեքների շնորհիվ՝ Գեղարդը, ռեկրեացիայի և զբոսաշրջության տարբեր ձևերի շնորհիվ Ծափաթաղը, Կալավանը, Գոմքը, Թորոսգյուղը:

Լեռնային շրջանները գերազանցապես զբաղվում են էքստենսիվ անասնապահությամբ: Այն հենվում է արոտների 1054,2 հազ. *հա* (51,5%) ու խոտհարքների վրա 121,7 հազ. *հա* (5,9%) [7]: Մեր հանրապետության արոտներն ու խոտհարքներն աչքի են ընկնում ցածր որակով և պետք է ենթարկվեն արմատական բարելավման: Այդ հողատեսքերի, հատկապես խոտհարքների, բերքատվության բարձրացման շնորհիվ կստեղծվի ամուր կերային բազա, որի արդյունքում կզարգանա անասնապահությունը: Լեռնային շրջաններում անհրաժեշտ է տեղական բնակլիմայական պայմաններին հարմարված բարձր մթերատու անասունների բուծումը: Կիրառելով լեռնային տարբեր երկրների փորձը: Հանրապետության լեռնային շրջաններում չափազանց կարևոր է բուսաբուծության զարգացումը: Առաջին հերթին կերաբույսերի, քանի որ այս գոտին անասնաբուծության համար պետք է ստեղծի կերային բազա: Բացի դրանից կարելի է զարգացնել կարճ վեգետացիա ունեցող բանջարանոցային մշակաբույսերի մշակությունը: Զգալի աշխատանքներ են տարվում սակավ ջերմասեր պտուղների կլիմայավարժեցման ուղղությամբ և դրանց մշակման բարձրությունը հասցնելով 1900-ից մինչև 2100 *մ*: Այսպես, Ապարանի, Մարտունու, Վարդենիսի տարածաշրջանների բնակիչներն իրենց տնամերձ հողամասերում հաջողությամբ զբաղվում են պտղաբուծությամբ (խնձորենի, տանձենի, սալորենի):

Լեռնային շրջանների գյուղատնտեսության զարգացման գործում կարևորվում է կարտոֆիլի մշակությունը: Արդեն մի քանի տասնամյակ է հանրապետությունը վերջինիս պահանջարկով ինքնաբավ է: Կարելի է ավելի ընդարձակել կարտոֆիլի ցանքատարածությունները Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի, Շիրակի մարզերում և արդյունքում կարտոֆիլի մշակությունը կարող է դառնալ ապրանքային նշանակության: Կարտոֆիլի մշակությունն աշխատատար է և կարելի է ընդգրկել մեծ թվով աշխատողների:

Տարածքային առումով լեռնային շրջանները պետք է արժանանան մեծ ուշադրության: Արդյունավետ պայմաններ կարող են ստեղծվել բարձրադիր և ցածր գոտիների տնտեսությունների միջև արտադրական կապերի ստեղծման միջոցով, հատկապես, երբ հաշվի են առնվում տարբեր գոտիների բնաաշխարհագրական իրար լրացնող բազմաթիվ հնարավորությունները: Լեռնային գյուղական բնակավայրերում բնակչության արտահոսքը կանգնեցնելու համար կարևոր միջոցառումներից մեկը պետք է լինի փոքր մեծության արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը: Ձեռնարկությունները կարող են ստեղծվել երկու պայմանով՝ տվյալ բնակավայրի շրջանում եղած միջոցներով (շինանյութի նախնական մշակում, կաթնամթերքների, հացաթխման և այլն) և տարբեր ձեռնարկությունների մասնաճյուղերի, կամ ինքնուրույն փոքր ձեռնարկությունների կառուցումով: Վերջինս նախընտրելի էր և մեծ նշանակություն ուներ: Խորհրդային տարիներին այդ կարգի ձեռնարկությունների թիվը լեռնային և բարձր լեռնային բնակավայրերում անցնում էր 100-ից: Սակայն այսօր, հետխորհրդային շրջանում նվազող բնակչություն ունեցող բնակավայրերում, պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ձեռնարկությունները գերազանցապես դադարել են գործելուց (Պաղակն, Սեմյոնովկա, Գորայք և այլն):

Լեռնային շրջանների զարգացման գործում կարևոր դեր ունեն քամիները, հատկապես լեռնահովտայինները, որոնք ակտիվ են հատկապես Ապարանի սարահարթում, Սևանի ավազանում (լեռնա-լճային քամիներ), արագությունը հասնում է մինչև 20 *մ/վրկ*: Սրանք հիմք են հողմային էլեկտրակայաններ կառուցելու համար, որի փորձը կատարվել է դեռևս խորհրդային տարիներին՝ Ապարանի սարահարթի հյուսիսային հատվածում կառուցած հողմակայանով:

Գործնական տեսակետից կարևոր են Արեգակի գումարային ճառագայթման մեծությունները (ուղիղ և ցրված ճառագայթման գումարը): Դրանց նվազագույն մեծությունը տարեկան կազմում է 120, իսկ առավելագույնն՝ ավելի քան 160 *կկալ/սմ*^{2}: Հարկ է նշել, որ գումարային ճառագայթման տարեկան արժեքն ըստ բարձրության աճում է՝ բարձրադիր գոտում հասնելով առավելագույնի:

Արևափայլի տևողությունը հանրապետությունում տատանվում է 1700-ից 2780 *ժ* սահմաններում: Սևանի հարավային արևափայլի տևողությունն անցնում է 2600 *ժ*-ից:

Լեռնային բնակավայրերի բնակչության նվազման պատճառները շատ են: Որոշ գյուղական բնակավայրեր ունեն առաջխաղացում, որոշները՝ ոչ: Այսպես, Աբովյանի տարածաշրջանի Կապուտանի, Մարտունու տարածաշրջանի Մադինա և այլ գյուղերում, խորհրդային և հետխորհրդային տարիներին բնակչության թվաքանակը չի նվազել և առանձին տարիներին գրանցել է դանդաղ աճ: Աշտարակի տարածաշրջանի Արտաշավան և նրան ձուլված Սաղմոսավան բնակավայրերը հեռանկարային առումով ունեն բարենպաստ պայմաններ՝ (Երևան–Աշտարակ–Ապարան միջպետական խճուղու հարևանություն, Սաղմոսավանքի վանքային համալիր, պտղաբուծության նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում և այլն): Այս բնակավայրերը զբաղվում են պտղաբուծությամբ (խաղողագործության վերին սահմանը ՀՀ-ում), բանջարաբուծությամբ, զբոսաշրջությամբ: Ժամանակին գործել է տեքստիլ գալանտերիայի ֆաբրիկայի մասնաճյուղ: Այժմ որոշակի արտադրական ներդրումների դեպքում (հատկապես գյուղատնտեսական մթերքների վերամշակման) և

սպասարկման ենթակառուցվածքների արդիականացման ուղղությամբ բնակավայրերը ոչ միայն կկայունանան, այլև կգրանցեն տնտեսական աճ:

Նախկինում, լեռնային շրջաններում, լայնորեն տարածված է եղել հուշանվերների արտադրությունը (միշտ աչքի են ընկել իրենց բարձր որակով), որը վերջին տասնամյակների ընթացքում համարյա ուշադրության չի արժանացել: Վերջին տարիներին, երբ անընդհատ ավելանում է Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը, կարծում եմ, հուշանվերների արտադրության ընդլայնումը մեծ չափով կստեղծի նոր աշխատատեղեր և կդառնա բնակչության եկամտի կարևոր աղբյուր: Այստեղ կարելի է օգտվել միջազգային փորձից՝ Շվեյցարիա, Չեխիա, Հունաստան, Իտալիա, ՌԴ-ի մի շարք մարզեր (Պսկովի, Նովգորոդի, Տվերի, Վլադիմիրի և այլն) իրենց թողարկած լայն տեսականին հանում են շուկա:

Լեռնային շրջանների գյուղական բնակավայրերի «ազատ ձեռքերը» կարելի է օգտագործել տվյալ բնակավայրերի կառուցապատման, ճանապարհաշինարարական, բարեկարգման և այլ աշխատանքներում:

Գյուղական բնակչությանն աշխատանքով ապահովելու գործում մեծ նշանակություն կարող է ունենալ նրա շարժունակության բարձրացումը: Այսպես, այն գյուղական բնակավայրերը, որոնց բնակչության թիվը շատ փոքր է և այնտեղ արտադրական ձեռնարկության կառուցումը տնտեսական տեսակետից շահավետ չէ, կարելի է այդ բնակավայրերի բնակիչներին տեղափոխել աշխատանքի հարևան բնակավայրեր: Այդ նպատակով փոքր բնակավայրերն առաջնակարգ ճանապարհներով պետք է կապված լինեն մոտակա բնակավայրերի հետ: Մինչ այժմ Հայաստանի երեք տարածաշրջաններում՝ (Ամասիայի, Աշոցքի և Արագածի) բացակայում են քաղաքային, գերխոշոր և խոշոր գյուղական բնակավայրերը և հաճախ ձեռնարկություններ ունեցող բնակավայրերի հեռավորությունն անցնում է 50 *կմ*-ից: Բնականաբար, աշխատանքի տեղափոխությունը նույնիսկ բարեկարգ ճանապարհների առկայության պայմաններում, կստեղծի լրացուցիչ խնդիրներ:

Լեռնային շրջանների բնակչությանն աշխատանքով ապահովելու միջոցներից են լեռնային առողջարար, արևոտ կլիման, հանքային ջրերի, գեղատեսիլ բնության առկայությունը: Այս շրջաններում կարելի է ստեղծել հանգստի գոտիներ, առողջարաններ, քեմփինգներ: Նույնիսկ լեռնային փոքր գյուղերի տարածքում կարելի է այդպիսիք ստեղծել գերազանցապես հանգստյան օրերին և արձակուրդներին քաղաքի բնակիչներին տրամադրելու համար, իսկ լեռնաբնակները կարող են հանդես գալ որպես սպասարկող անձնակազմ: Այդպիսի շրջանները մեր հանրապետությունում ունեն մեծ ընդգրկում (Ապարանի, Աշոցքի, Ամասիայի, Կապանի, Սիսիանի, Վայքի տարածաշրջաններ):

ՀՀ լեռնային անտառազուրկ շրջանները կարելի է օգտագործել հատկապես մարզական բազաների ստեղծման նպատակով: Ձմեռային ձնառատ շրջանում, կարելի է իրականացնել ձմեռային սպորտաձևերի անցկացում՝ Աշոցքի, Ամասիայի տարածաշրջաններ: Հայաստանի մի քանի տարածաշրջաններում՝ Աշտարակի, Ապարանի, Սևանի, Թալինի, կարելի է ստեղծել հանգստի գոտիներ, որոնց օժանդակությամբ մի շարք գյուղական բնակավայրերում կստեղծվեն աշխատանքի նոր հնարավորություններ (Ծաղկասար, Եղնիկ, Վարսեր, Հանքավան, Տեղեր, Անտառուտ և այլն):

Լեռնային շրջանների զարգացման գործում մեծ դեր կարող է ունենալ զբոսաշրջությունը: ՀՀ-ն ունի լայն հնարավորություններ այս ոլորտի զարգացման

համար: Մեր երկրի զարգացման գերակա ուղղություններն են գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը: Դա նշանակում է, որ լեռնային գյուղական բնակավայրերի մասնակցությունն այս գործում ինքնաբերաբար կարևորվում է: Մեր հանրապետության ռելիեֆի անձեռակերտ ձևերը, հազարամյակների պատմություն ունեցող պատմամշակութային արժեքները, ժամանակակից սպասարկման ենթակառուցվածքների առկայությունը հնարավորություն են տալիս զարգացնելու տնտեսությունը, այդ թվում՝ լեռնային շրջաններում: Զբոսաշրջությունն այն բնագավառն է, որտեղ ոչ մեծ ներդրումներով կարելի է ստանալ մեծ եկամուտ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ որոշ փոքր լեռնային երկրների՝ Անդորրա, Լիխտենշտեյն, կղզի պետությունների՝ Կարիբյան ավազանի և այլն, առանձին տարածաշրջանների՝ Հյուսիսային Իտալիա, Կենտրոնական Շվեյցարիա, Արևելյան Ավստրիա, եկամուտների ճնշող մեծամասնությունը ստանում են զբոսաշրջությունից: Զբոսաշրջության զարգացումը պահանջում է բարեկարգել ճանապարհները, կառուցել ոչ մեծ գիշերակացի օբյեկտներ, առևտրի և սննդի տաղավարներ, բնական և պատմամշակութային հուշարձանները, ստեղծել օժանդակ հարմարություններ, կատարել անտառատնկումներ: Հարցը մնում է վերադաս պլանային և գիտական մարմիններին, գործարարներին ու անհատ ձեռներեցներին, որ պլանավորեն և հստակ ծրագրեր մշակեն մեր երկրի համար:

Խորհրդային տարիներին գյուղատնտեսության բնագավառում իրականացված սխալ քաղաքականության հետևանքով նվազել է լեռնային գյուղական բնակավայրերի բնակչությունը, առանձին դեպքերում՝ դատարկվել: Այսպես, 1950-ական թվականներին լեռնային շրջանների բարակ հողաշերտով շուրջ 140 հազ. *հա* խոտհարքներ և արոտավայրեր ընդգրկվեցին հացահատիկի մշակության մեջ, որի հետևանքով կարճ ժամանակամիջոցում հողատեսքերը ենթարկվեցին էռոզիայի ու երկար ժամանակով դուրս եկան գյուղատնտեսական շրջանառությունից: Լեռնային և հարթավայրային շրջանների տեխնիկական հագեցվածության, աշխատանքի արտադրողականության տարբերություններն անցյալում, և մեր օրերում, հողի սեփականաշնորհման ոչ ճիշտ քաղաքականության արդյունքում տուժեցին հատկապես լեռնային շրջանները: Երկար տարիներ տարբեր շրջանների բնակիչները կատարել են հավասար ծավալի աշխատանք, բայց, քանի որ լեռնային շրջանների մեկ հեկտարի բերքատվությունը քիչ է եղել, քան հարթավայրային շրջանինը, ուստի հարթավայրային շրջանի բնակիչները ստացել են բարձր աշխատավարձ, քան լեռնային շրջանի բնակիչները: Հասկանալի է, որ նման վիճակն անդրադարձել է բնակչության միգրացիայի վրա: Լեռնային շրջանների գյուղատնտեսության զարգացման համար բարենպաստ ազդեցություն ունեցավ 1965 թ.-ին ընդունված որոշումն այն մասին, որ տարբեր հնարավորություններ ունեցող տնտեսությունները պետք է դրվեն զարգացման մոտավորապես հավասար տնտեսական պայմանների մեջ: Այդ խնդրի լուծման համար որոշվեց տարբերակել պետական գնման գներն՝ ըստ բնատնտեսական գոտիների: Այժմ բարձր լեռնային գյուղական բնակավայրերում աշխատողները վարձատրվում են 20% հավելումով, իսկ լեռնային գյուղական բնակավայրերում աշխատողները՝ 10%: Հանրապետության տարբեր շրջաններում, պայմանավորված բնաաշխարհագրական, տարաբնակեցման առանձնահատկություններով, բնակավայրերի հավելավճարային քաղաքականությունը շեղվում է ծովի մակարդակից ունեցած բարձրությունից: Այսպես, Սյունիքի մարզի Վերին Գիրաթաղը

(1470 *մ*), Լոռու մարզի Ձորամուտն (1590 *մ*) ունեն լեռնային բնակավայրի կարգավիճակ: ՀՀ 43 գյուղական բնակավայրեր, որոնց բարձրությունները տատանվում են 1600–1700 *մ*-ի միջև, նույնպես օգտվում են այդ կարգավիճակից: Իհարկե այս ամենը նույնպես խթան են հանդիսանում լեռնային բնակավայրերի կայունացման գործում:

Եզրակացություն: Համաձայն ուսումնասիրության և վերլուծության արդյունքի.

- ՀՀ լեռնային շրջանների արոտավայրերի ճիշտ և ռացիոնալ օգտագործում, որի արդյունքում ստեղծվում են անասնապահական բարձր որակի և ցածր ինքնարժեքի մթերքներ;
- լեռնային տարածքների բնական ռեսուրսների շահագործում, որոնց զգալի մասն էկոլոգիական առումով դեռևս չի արդյունահանվում:

Առաջարկություններ.

- սառնորակ, հանքային, բուժիչ ջրերի շուրջ ստեղծել հանգստի և առողջարարական օբյեկտներ;
- օգտագործել լեռնային շրջանների հողմային, արեգակնային ճառագայթման ռեսուրսները որպես էներգիայի անսպառ և էժան աղբյուր;
- անհատական աշխատանքային գործունեության ծավալման միջոցով աշխատանքներ ձեռնարկել լեռնային բնակավայրերում բնակչության արտահոսքը նվազեցնելու և կանխելու ուղղությամբ;
- հիմնել տարբեր արտադրատեսակներ թողարկող փոքր ծավալի արտադրամասեր, այդ թվում՝ արտադրական և պատվերների սրահներ՝ հագուստի, կոշկեղենի, հուշանվերների, հացի և հացամթերքների, կաթնամթերքի, լիմոնադի, կահույքի վերանորոգման;
- նախաձեռնել լեռնային շրջանների բնակչության արհեստների վերականգնումը;
- բարեկարգել ճանապարհները, ստեղծել բնակչության ազատ ժամանակի կազմակերպման օջախներ;
- բարելավել առողջապահական, կրթական, մշակութային ծառայությունները:

Այսպիսով, այն միջոցառումները, որոնք վերաբերվում են լեռնային բնակավայրերին և այն արտոնությունները, որոնք սահմանվել են նրանց համար, ճիշտ և նպատակային իրականացնելու դեպքում հնարավորություն կտան արդյունավետ օգտագործել լեռնային շրջանների բնական պայմաններն ու հարստությունները և լուծել լեռնային շրջանների կայունացման ու համակողմանի զարգացման խնդիրը:

Ստացվել է՝ 11.03.2021
Գրախոսվել է՝ 25.04.2021
Հաստատվել է՝ 27.04.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Ս.Հ. *Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումը* (Առ 01.01.2003 թ.): Եր. (2003), 268:
2. Պոտոսյան Վ.Ա. ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում տարաբնակեցման շարժընթացը և առկա հիմնախնդիրները: *ԵՊՀ գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն* **51** (2017), 202–209: https://doi.org/10.46991/PYSU:C/2017.51.3.202

3. ՀՀ ԱՎԾ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով: Եր. 2010, 2019 թթ.: https://armstat.am
4. Ավետիսյան Ս., Գրիգորյան Վ. *Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տեղեկատու*: Եր., Մեկնարկ (2018), 1056 էջ:
5. *Հայկական ՍՍՀ վարչատերիտորիալ բաժանումն* (Առ 01.08.1988 թ.): Եր. (1988), 208 էջ:
6. *Հայկական ՍՍՌ վարչատերիտորիալ բաժանումն* (Առ 01.10.1955 թ.): Եր. (1955), 230 էջ:
7. *Հայաստանի վիճակագրական տարեգիրք*: Եր. (2019), 601 էջ: https://armstat.am/am/?nid=586&year=2019

В. В. ГРИГОРЯН, Н. А. СААКЯН

ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ГОРНЫХ СЕЛЬСКИХ НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Резюме

Социально-экономическое развитие горных населенных пунктов является одной из важнейших задач нашей республики. Горные местности являются в основном животноводческими районами. Они характеризуются природными и антропогенными ценностями, комфортными климатическими условиями, развитыми ремеслами, богатыми ресурсами, рациональное использование которых может стимулировать не только развитие горных местностей, но и их стабилизацию. Горные местности также являются центрами организации и развития различных видов туризма. В статье на основе обобщения фактического материала представлены актуальные проблемы основных особенностей горных сельских поселений Республики Армения: расселение, специализация, инфраструктура.

V. V. GRIGORYAN, N. A. SAHAKYAN

SOCIO-ECONOMIC DEVELOPMENT PROBLEMS OF MOUNTAIN RURAL RESIDENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

Summary

Socio-economic development of mountainous rural areas is one of the important problems of our republic. Mountainous areas are cattle-breeding areas. They are characterized by natural, man-made values, favorable climatic conditions and crafts, resources, the proper use of which can be a stimulus not only for the stabilization of mountain settlements, but also for their development. Mountainous areas are favorable areas for the organization of various forms of tourism. In the article, based on the generalization of the factual material, the current problems of the main features of the mountainous rural settlements of the Republic of Armenia are presented: settlement, specialization, infrastructure.